ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«19» 11 2025թ.
No 014098

«ՍՄՈՔ ՀԱՈՒՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Խուդյակովի 3 նրբ., տ. 60ա,
էլ. փոստի հասցե՝ alla@boffo.am)

Հարգելի՛ պարոն Ծատուրյան,

Կից ուղարկվում է Մրցակցության և սպառողների շահեր պաշտպանության հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 18-ի ««Սմոք Հաուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-04143/25 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 764-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ «3» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ

Կատարող՝ Ասպղիկ Վահանյան
Սպառողների շահերի պաշտպանության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (274)

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 4 դեկտեմբերի 2025 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2025 թվականի թիվ 764-Ա

«ՍՄՈՔ ՀԱՈՒՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ ՀԳ-04143/25 ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2025 թվականի նոյեմբերի 18-ի նիստում, քննարկելով «Սմոք Հաուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) վերաբերյալ թիվ ՀԳ-04143/25 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովը 2025 թվականի օգոստոսի 22-ի ««Սմոք Հաուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտումների վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 576-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 576-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-04143/25 վարույթը (այսուհետ նաև՝ **թիվ ՀԳ-04143/25 վարույթ**):

Թիվ ՀԳ-04143/25 վարույթը հարուցվել է թիվ 576-Ա որոշման մեջ նշված Ապրանքներից յուրաքանչյուրի իրացման առնչությամբ Ընկերության վարքագծում սպառողների շահերը խախտող գործելակերպի հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Ընկերությունը թիվ 576-Ա որոշումը ստացել է օգոստոսի 28-ին և սեպտեմբերի 27-ին ներկայացրել է գրավոր դիրքորոշում հայտնելով, որ Հանձնաժողովի կողմից արձանագրված իրավախախտումները հաշվի են առնվել և այն արտադրանքները, որոնք ունեցել են թերություններ հանվել են վաճառքից կամ թերությունները շտկելուց հետո միայն դրվել են վաճառքի:

Ընկերությունը նաև նշել է, որ Ընկերությանը շարունակական պատասխանատվության միջոցներ կիրառելու արդյունքում հնարավոր է վերջինիս գործունեության դադարեցումը, իսկ Ընկերությունը նպատակ ունի օրինական դաշտում շարունակել գործունեությունը, վճարել առաջացած հարկերը:

Ընկերությունը խնդրում է հաշվի առնել ողջ վերոգրյալը և պատասխանատվության միջոց չկիրառել կամ կիրառել այն առավելագույնը նախազգուշացման ձևով:

Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2025 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 12710 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 12710 գրություն**) Ընկերությունից պահանջվել է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) Ընկերության կողմից 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 23-ն ընկած ժամանակահատվածում ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների շրջանառության ծավալի վերաբերյալ՝ համաձայն կից ներկայացվող ձևանմուշի.

2) Ընկերության 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում նիկոտին մատակարարող համակարգերի, դրանց լիցքավորման համար նախատեսված հեղուկների և սնյուսների իրացումից ստացված հասույթի չափը՝ առանձնացված ըստ ամիսների.

3) Թիվ 576-Ա որոշման մեջ նշված ապրանքների՝ արտադրողի կողմից տրամադրված համապատասխանության հավաստագրերի (անվտանգության թերթիկների) պատճենները.

4) 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 23-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից ներմուծված նիկոտին մատակարարող համակարգերի և դրանց լիցքավորման համար նախատեսված հեղուկների համար ձեռք բերված դրոշմապիտակների (դատա մատրիքս համակարգ) քանակը՝ կցելով հիմնավորող ապացույցները:

Ընկերությունը 2025 թվականի նոյեմբերի 4-ի գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը գործում է 2024 թվականի մայիս ամսից, հետևաբար թիվ 12710 գրության 1-ին և 2-րդ կետերով պահանջված տեղեկատվությունը լրացված է ըստ դրա: 2025 թվականի նոյեմբերի 5-ին Ընկերությունը ի լրումն նախորդ գրության ներկայացրել է դրոշմապիտակներ ստանալու համար հայտերը և գրությամբ նշել է, որ ապրանքների համապատասխանության հավաստագրեր Ընկերությունը չունի:

Հաշվի առնելով, որ թիվ ՀԳ-04143/25 վարույթի ժամկետը լրանում է 2025 թվականի նոյեմբերի 22-ին, իսկ թիվ 12710 գրությամբ պահանջված տեղեկատվությունը վերլուծելու, Ընկերության լսված լինելու հավելյալ հնարավորություն ապահովելու, անհրաժեշտության դեպքում այլ տեղեկատվություն ձեռք բերելու, ինչպես նաև թիվ ՀԳ-04143/25 վարույթի շրջանակում գործի բազմակողմանի և լրիվ քննությանն ուղղված այլ գործողություններ կատարելու համար՝ թիվ ՀԳ-04143/25 վարույթի իրականացման՝ Օրենքով սահմանված եռամսյա ժամկետը բավարար չէ՝ Հանձնաժողովի սպառողների շահերի պաշտպանության վարչությունը 2025 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 13688 զեկուցագրով առաջարկել է թիվ ՀԳ-04143/25 վարույթի ժամկետը 2025 թվականի նոյեմբերի 22-ից եռամսյա ժամկետով երկարաձգել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ թիվ ՀԳ-04143/25 վարույթի ժամկետն անհրաժեշտ է եռամսյա ժամկետով երկարաձգել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2025 թվականի նոյեմբերի 22-ից եռամսյա ժամկետով երկարաձգել «Սմոք Հաուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-04143/25 վարույթի ժամկետը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2025 թ. նոյեմբերի 18
Երևան